Նախագիծ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ոլորտում համագործակցության մասին

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 2010 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ հաստատած Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մինչև 2015 թվականի ռազմական համագործակցության հայեցակարգով,

ընդունելով սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար կադրերի պատրաստման ոլորտում փոխգործակցության հետագա զարգացման պահանջարկը,

նկատի ունենալով միջազգային համագործակցության հիման վրա սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար բարձր որակավորմամբ գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ շահագրգռվածությունը և նպատակադրվածությունը,

ղեկավարվելով ԱՊՀ մասնակից պետությունների ազգային օրենսդրություններով և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով ու սկզբունքներով,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

«ռազմական ուսումնական հաստատություն» – սույն Համաձայնագրի մասնակից պետության բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ մասնագիտական ուսուցման կրթական հաստատություն, որտեղ իրականացվում է սույն

Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստում, այդ թվում բարձրագույն որակավորմամբ (այսուհետ՝ գիտական և գիտամանկավարժական կադրեր),

«գիտական (գիտահետազոտական) կազմակերպություն» – սույն Համաձայնագրի մասնակից պետությունների գիտական հաստատություն, որն ազգային օրենսդրությանը համապատասխան իրավունք է ստացել հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում կրթական գործունեություն իրականացնելու համար,

«մագիստրատուրա» - մագիստրոսի որակավորման (աստիճանի) շնորհմամբ մասնագիտական կրթության մակարդակ, որն ապահովում է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար մասնագետների պատրաստումը,

«ադյունկտ/ասպիրանտ ռազմական ուսումնական հաստատությունում» - ռազմական ուսումնական հաստատություններում և գիտական կազմակերպություններում հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու ձև, որը թույլ է տալիս պատրաստել որակավորված գիտական աշխատանք գիտությունների թեկնածուի, փիլիսոփայության դոկտորի (Doctor of Philosophy Ph.D), մասնագիտության դոկտորի գիտական աստիճան հայցելու համար,

«դոկտորանտուրա» - բարձրագույն գիտական որակավորման մասնագետի պատրաստման ձև, որը թույլ է տալիս պատրաստել որակավորված գիտական աշխատանք գիտությունների դոկտորի, փիլիսոփայության դոկտորի (Doctor of Philosophy Ph.D), մասնագիտության դոկտորի գիտական աստիճան հայցելու համար,

«հայցորդություն» - համապատասխան գիտական աստիճան հայցելու դիսերտացիայի պատրաստման ձև մասնագետների կողմից, որոնք ամրագրված են ռազմական ուսումնական հաստատություններին կամ գիտական կազմակերպություններին՝ այդ թվում առանց ասպիրանտուրա կամ դոկտորանտուրա ընդունվելու,

«գիտական և գիտամանկավարժական կադրեր» - գիտական (գիտահետազոտական) կազմակերպություններում և ռազմական ուսումնական հաստատություններում արհեստավարժ գիտական (գիտական և մանկավարժական) գործունեությամբ զբաղվող մասնագետներ:

Հոդված 2

Կողմերը, համաձայնեցված միջոցառումներ են ձեռնարկում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար կադրերի պատրաստման ոլորտում փոխգործակցության հետագա զարգացման համար սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ համագործակցության հիման վրա և այդ նպատակներով.

իրականացնում են գիտական և գիտամանկավարժական կադրերի փոխադարձ նպատակային պատրաստում,

ապահովում են գիտական և գիտամանկավարժական կադրերի վերապատրաստումը և որակավորման բարձրացումը,

զարգացնում են ռազմական ուսումնական հաստատությունները և գիտական կազմակերպությունների համակարգը՝ ի շահ գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման,

ապահովում են գիտական, գիտամանկավարժական կադրերի պատրաստման համար հիմնական որակավորման պահանջների համադրելիությունը և աջակցում են փաստաթղթերի ընդունմանը, ըստ որոնց հաստատվում է ստացված որակավորումը,

զարգացնում են ռազմական կրթության և գիտության բնագավառի տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակման համակարգը,

իրագործում են համատեղ նախագծեր գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման և ատեստացիայի /գնահատման/ բնագավառում,

կազմավորում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի գործունեության տարբեր ուղղություններով գիտական հետազոտությունների և խնդիրների համակարգված ցանկը:

Հոդված 3

Կողմերն իրականացնում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի գիտական և գիտամանկավարժական կադրերի փոխադարձ նպատակային պատրաստում մագիստրատուրայում, ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում պայմանագրային (կոնտրակտային) հիմքով ստացիոնար և հեռակա ուսուցման ձևերով:

Հոդված 4

Ուղարկող Կողմը մագիստրատուրայում, ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում թեկնածուների ընտրությունն իրականացնում է սույն Համաձայնագրի մասնակից Ընդունող պետություններում գործող նախընտրելի մասնագիտության պատրաստման համար թեկնածուների ընտրության պահանջներին համապատասխան:

Ընդունող կողմը սույն Համաձայնագրի մասնակից Ուղարկող պետության զինծառայողների ընդունումն իրականացնում է Ուղարկող կողմի երաշխավորության հիման վրա, առանց մրցութային քննություններ հանձնելու: Դիմումները ձևակերպվում են Կողմերի լիազորված մարմինների միջոցով:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման դեպքում Կողմերը հաշվի են առնում սույն Համաձայնագրի մասնակից Ուղարկող պետության գործնական և գիտական հետաքրքրությունները:

Սույն Համաձայնագրի մասնակից Ուղարկող պետության զինծառայողների դիսերտացիայի աշխատանքների թեմաները որոշվում է Ուղարկող պետության հետ համաձայնեցմամբ, և հաստատում է Ընդունող կողմը:

Մագիստարատուրայում, ադյունկտուրայում, դոկտորանտուրայում պատրատման կարգը, ժամկետները և կացությունը սահմանվում են սույն Համաձայնագրի մասնակից Ընդունող պետության ազգային օրենսդրությանը համապատասխան և ամրագրվում են կոնտրակտում (պայմանագրում):

Հոդված 6

Կողմերը գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ համագործակցում են գիտական աստիճան հայցելու ձևով:

Դիսերտացիայի ուղղությամբ աշխատանքներն ավարտելու համար մի Կողմի մասնագետները փոխադարձ պայմանավորվածություններին համապատասխան կարող են ամրագրվել սույն Համաձայնագրի մասնակից այլ պետության ռազմական ուսումնական հաստատություններին կամ գիտական կազմակերպություններին (առանց ասպիրանտուրայում կամ դոկտորանտուրայում հաշվառման):

Հոդված 7

Գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման որակի բարձրացման նպատակով Կողմերն աջակցում են մի Կողմի ռազմական ուսումնական հաստատությունների ու գիտական կազմակերպությունների առաջատար գիտնականների և մասնագետների մասնակցությանը մյուս Կողմի դիսերտացիոն աշխատանքների փորձգիտությանը:

Հոդված 8

Կողմերը զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման բնագավառում համագործակցությունը զարգացնում են հետևյալ միջոցներով.

սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական որակավորման ազգային համակարգերի ու դրանցում փոփոխությունների իրականացման մասին փոխադարձ տեղեկատվությամբ,

գիտական աստիճան հայցելու հիմնական պահանջների համադրման ապահովմամբ և ստանդարտների (պահանջների) համաձայնեցմամբ,

գիտական աշխատողների մասնագիտությունների անվանացուցակների ներդաշնակությամբ և միասնականությամբ, ինչպես նաև դրանց կազմավորման գծով փոխադարձ խորհրդատվություններով,

սույն Համաձայնագրի մասնակից մի պետության զինծառայողների համար հավասար պայմանների ստեղծումով սույն Համաձայնագրի մասնակից այլ պետության տարածքում գիտական աստիճան հայցելու համար դիսերտացիայի պաշտպանության համար,

սույն Համաձայնագրի մասնակից Ուղարկող պետության զինծառայողներին՝ գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման, այդ թվում զինծառայողին համապատասխանող որակավորման (գիտական աստիճանի) շնորհմամբ, համապատասխան կրթական ծրագրերի ընդգրկմամբ շնորհումը /կոչումը/ հաստատող պետական նմուշի համապատասխան փաստաթղթերի՝ սույն Համաձայնագրի մասնակից Ընդունող պետության օրենսդրությանը համապատասխան տրամադրման ապահովմամբ:

Հոդված 9

Կողմերը սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներում ճանաչում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային մարմինների կողմից տրված գիտական աստիճանի մասին պետական նմուշի փաստաթղթերը:

Այդպիսի փաստաթղթերի համեմատությունն իրականացվում է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

Գիտությունների թեկնածուները և դոկտորները, փիլիսոփայության դոկտորները (Doctor of Philosophy Ph.D) և ուղղության, որոնց գիտական աստիճան է շնորհվել սույն Համաձայնագրի մասնակից պետություններում, ճանաչվում են նշված աստիճանների կրողներ առանց լրացուցիչ փորձագիտության:

Հոդված 10

Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման ուղղությամբ Կողմերը փոխգործակցում են նախապես ձեռքբերված մասնագիտական ունակությունների խորացմանն և կատարելագործմանն ուղղված լրացուցիչ կրթական ծրագրերի իրագործման միջոցով:

Հոդված 11

Փոխադարձ պայմանավորվածության հիման վրա Կողմերը կազմակերպում են գիտական և գիտամանկավարժական կադրերի ստաժավորումը, ինչպես նաև իրականացնում են մի Կողմի բարձր որակավորմամբ մասնագետների գործուղում սույն Համաձայնագրի մասնակից այլ պետության ռազմական ուսումնական հաստատություն և կազմակերպություն կրթական ու գիտական գործունեության համար:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի մասնակից Ուղարկող պետության զինծառայողների վրա, ռազմական ուսումնական հաստատություններում և գիտական կազմակերպություններում նրանց ուսման, ստաժավորման և աշխատանքի ընթացքում տարածվում են սույն Համաձայնագրի մասնակից Ընդունող պետության ռազմական ուսումնական հաստատության և գիտական կազմակերպության

համապատասխան կարգավիճակի անձնակազմի համար սահմանված նորմատիվ ակտերը, բացառությամբ սույն Համաձայնագրի 20-րդ հոդվածի առարկա հանդիսացող պայմանների: Նրանց համար այլ բացառություններ կարող են վերապահվել Կողմերի լիազորված մարմինների միջև կոնտրակտում (պայմանագրում):

Հոդված 13

Կողմերը՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան մագիստրոսների, ասպիրանտների, դոկտորանտների, գիտական աստիճանի համար հայցորդների, գիտական և գիտամանկավարժական կադրերի հետ փոխգործակցում են ուսումնական, գիտական, արխիվային տեղեկատվությունից օգտվելու թույլատվության առումով:

Կողմերն իրենց լիազորված մարմինների միջոցով ուսումնական, գիտական, արխիվային տեղեկատվության և գրագրության փոխանակում են իրականացնում ռազմական կրթության և գիտության ոլորտում:

Հոդված 14

Կողմերը կազմակերպում և անցկացնում են համատեղ կրթական և գիտական միջոցառումներ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի գիտական և գիտամանկավարժական կադրերի մասնակցությամբ:

Հոդված 15

Կողմերը՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի մասնագետների պատրաստման ուղղությամբ համաձայնեցված միջոցառումներ են իրականացնում ուղղված՝ ռազմական ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների համակարգի զարգացմանը:

Հոդված 16

Կողմերը փոխգործակցում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման գծով կրթական ծառայություններ տրամադրող

ռազմական ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների միջև ուղիղ կապ զարգացնելու համար:

Հոդված 17

Կողմերը համագործակցում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի գիտական և գիտամանկավարժական կադրերի ազգային համակարգերի զարգացման գիտամեթոդական, նյութատեխնիկական և այլ ապահովման հարցերով:

Հոդված 18

Յուրաքանչյուր Կողմ սահմանում է լիազորված մարմին (մարմիններ), ում վրա դրվում է սույն Համաձայնագրի իրագործումը, որի մասին միաժամանակ տեղեկացնում է ավանդապահին՝ ծանուցելով սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Լիազորված մարմնի (մարմինների) անվանման փոփոխության դեպքում համապատասխան Կողմն այդ մասին տեղեկացնում է ավանդապահին:

Կողմերի լիազորված մարմիններն անմիջական են փոխգործակցում սույն Համաձայնագրի իրագործման հարցերով:

Հոդված 19

Սույն Համաձայնագրի իրագործման ուղղությամբ գործունեության համակարգումը դրվում է ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի վրա:

Սույն Համաձայնագրով առաջադրված խնդիրների կատարման համար համագործակցության մեխանիզմների զարգացման նպատակով, ինչպես նաև համատեղ որոշում պահանջող հարցերի ուսումնասիրման համար ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղարությունը կազմակերպում է Կողմերի լիազորված մարմինների ներկայացուցիչների համակարգված խորհրդակցություններ (այսուհետ՝ Համակարգված խորհրդակցություն):

Հոդված 20

Գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ֆինանսական պայմանները սահմանվում են Կողմերի լիազորված մարմինների միջև կոնտրակտներում (պայմանագրերում) փոխադարձ պայմանավորվածությունների հիման վրա սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան նախատեսված միջոցների սահմաններում:

Կողմերն իրավունք ունեն պայմանավորվածությամբ օգտագործել փոհաշվարկների տարբեր ձևեր:

Հոդված 21

Կողմերի միջև տեղեկատվության փոխանակումը և դրա պաշտպանությունն իրականացվում է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

Միջպետական գաղտնիքների հետ վարվելու կարգը և դրանց պաշտպանությունն իրականացվում է 1993 թվականի հունվարի 22-ի միջպետական գաղտնիքների պահպանության փոխադարձ ապահովման մասին համաձայնագրին համապատասխան և գաղտնի տեղեկատվության (պետական գաղտնիքների) փոխադարձ պաշտպանության (պահպանության) երկկողմ պայմանագրերով:

Սույն Համաձայնագրի իրագործման ընթացքում մի Կողմի ստացած տեղեկատվությունը չի կարող օգտագործվել ի վնաս մյուս Կողմերի շահերին:

Հոդված 22

Սույն Համաձայնագրին մասնակցությունը չի սահմանափակում Կողմերի իրավունքները գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման և որակավորման բնագավառում երկկողմ միջազգային պայմանագրերի կնքման միջոցով համագործակցության այլ ձևերի օգտագործման համար:

Հոդված 23

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում Կողմերի միջև ծագող վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով Համակարգող խորհրդակցությունների շրջանակներում կամ Կողմերի համաձայնեցրած այլ ընթացակարգերի միջոցով:

Հոդված 24

Սույն Համաձայնագիրը չի շոշափում սույն Համաձայնագրի մասնակից պետություններից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից են իրենք համարվում:

Հոդված 25

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցագիրն ավանդապահի ստանալու ամսաթվից 30 օր հետո: լրանալիս:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահի ստանալու ամսաթվից 30 օր հետո:

Հոդված 26

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ձևակերպված համապատասխան արձանագրություններով, որոնք համարվում են դրա անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 25-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 27

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո այն բաց է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններից յուրաքանչյուրի միանալու համար միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով: Միացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալու ամսաթվից 30 օր հետո:

Հոդված 28

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից, դուրս գալու իր այդ մտադրության մասին ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելով՝ ոչ ուշ, քան դուրս գալուց վեց ամիս առաջ և կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ժամանակ ծագած ֆինանսական և այլ պարտավորությունները:

Կատարված է_____ում 20_____թվականի _____ ____-ին՝ մեկ բնօրինակով, ռուսերենով: Բնօրինակն ի պահ է տրվում Անկախ պետությունների համագործակցության գործագիր կոմիտեին, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից	Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից
Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից	Տաջիկստանի Հանրապետության կառավարության կողմից
Բելառուսի Հանրապետության կառավարության կողմից	Թուրքմենստանի Հանրապետության կառավարության կողմից
Ղազախստանի Հանրապետության կառավարության կողմից	Ուզբեկստանի Հանրապետության կառավարության կողմից
Ղրղզստանի Հանրապետության կառավարության կողմից	Ուկրաինայի կառավարության կողմից
Մոլդովայի Հանրապետության կառավարության կողմից	